ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **23/10/2020**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:
Բացակա էին՝ Արտաշ Այվազյանը, Գառնիկ Խաչատրյանը, Դավիթ Մովսիսյանը, Վալոդյա Սմբատյանը
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Աշոտ Հարությունյան
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը
Լսեցին
23.10.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

Հաստատել 23.10.2020 թվականի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը.
1) ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2)ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ԴԱՍԵԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ ՈԼՈՐՏԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3)ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4)ՔԿԱԳ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5)ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԲՆԱԿՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0
Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ա/
Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով.

1. Տալ համաձայնություն համայնքային բյուջեի բաժին 11 խումբ 1 դաս 2 ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ ոլորտի, վարչական մասի պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 4252,0 հազ դրամ պակասեցնել ավելացնելով՝

- 4000,0 հազ ՀՀ դրամ բաժին 2 խումբ 5 դաս 1 պաշտպանություն /այլ դասերին չպատկանող/ ոլորտի այլ նպաստներ բյուջեից հոդվածին /հոդված 4729/ զոհված զինծառայողների ընտանիքներին աջակցություն ցույց տալու համար, յուրաքանչյուրի ընտանիքին՝ 200.0 հազ. ՀՀ դրամ:
- 52 հազ ՀՀ դրամ բաժին 5 խումբ 6 դաս 1 շրջակա միջավայրի պահպանում /այլ դասերին չպատկանող/ ոլորտի սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին հոդվածին /հոդված 4511/ համայնքի տարածքում առուների մաքրման աշխատանքների ֆինանսավորման համար
- 200,0 հազ ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ ոլորտի մասնագիտական ծառայություններ հոդվածին /հոդված 4241/ Միկոյան փողոց թիվ 7 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի տեխնիկական վիճակի ուսումասիրման ծառայությունների մատուցման ֆինանսավորման համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ն/

Լսեցին

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ԴԱՍԵՐԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ ՈԼՈՐՏԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով.

1. Տալ համաձայնություն համայնքային բյուջեի վարչական մասի բաժին 2 խումբ 5 դաս 1 պաշտպանության այլ դասերին չպատկանող ոլորտի նախահաշվի տրանսպորտային նյութեր հոդվածից /հոդված 4264/ 80.0 հազ. ՀՀ դրամ պակասեցնել՝ ավելացնելով նույն ոլորտի կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդվածին /հոդված 4267/ 60.0 հազ. ՀՀ դրամ և առողջապահական և լաբորատոր նյութեր հոդվածին /հոդված 4266/ 20,0հազ. ՀՀ դրամ տնտեսական , էլեկտրական ապրանքներ և դեղորյաք ձեք բերելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ն/

Լսեցին

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով.

1. Տալ համաձայնություն համայնքային բյուջեի վարչական մասի բաժին 3 խումբ 2 դաս 1 փրկարար ծառայության ոլորտի բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում հոդվածից /հոդված 4841/ 300.0 հազ. ՀՀ դրամ պակասեցնել, ավելացնելով նույն ոլորտի կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդվածին /հոդված 4267/ 222,0 հազ. ՀՀ դրամ և առողջապահական և լաբորատոր նյութեր հոդվածին /հոդված 4266/ 78,0հազ ՀՀ դրամ ձեռք բերված ապրանքների դիմաց վճարումներ կատարելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ն/

Լսեցին

ՔԿԱԳ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,,Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով.

1. Տալ համաձայնություն բաժին 1 խումբ 3 դաս 1 ընդհանուր բնույթի ծառայություններ ոլորտի ներքին գործուղումներ հոդվածից /հոդված 4221/ 30,0 հազ. ՀՀ դրամ պակասեցնել,,ավելացնելով նույն ոլորտի մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածին /հոդված 4252/ համակարգչային տեխնիկայի նորոգման ծախսերի ֆինանսավորման համար և գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածից /հոդված 4261/ 20,0 հազար ՀՀ դրամ պակասեցնել, ավելացնելով կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդվածին /հոդված 4267/ ծախսերի ֆինանսավորման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ն/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԲՆԱԿՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 25.01.2018թ. ,, Եղեգնաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին,, թիվ 04 որոշումը

1. Համայնքային բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) ոլորտի բաժին 10 խումբ 7 դաս 1 այլ նպաստներ բյուջեից հոդվածից /հոդված 4729/ համայնքի կարիքավոր բնակչին հատկացնել օգնություն .

1) Նարեկ Շահբազյան - 15000 ՀՀ դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ն/

Ավագանու անդամներ

ԱՐՏԱԿ ԱԼՈՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՍԱՔԱՆՅԱՆ

ՍՄԲԱՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷԴՈՒԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝

Անժելա Սարգսյան